ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

HEAD OF LOGISTICS SUPPORT DEPARTMENT
OF MINISRTY OF DEFENCE OF THE REPUBLIC
OF ARMENIA
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНИСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բաղրևանդի փ.5
Email: depart@mil.am
Հեռ.՝ (+37410) 29-45-45
Ֆաքս՝ (+37410) 29-46-13

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багревард 5,
Email: depart@mil.am
Tel.Тел.: (+37410) 29-45-45
Fax.Факс: (+37410) 29-46-13

№ ԴՄՄ/4564
"12" 12 2017թ.

«Էլայզեռ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00458742) տնօրեն
Է. Խաչատրյանին
հասցե՝ ք.Երևան, Մ.Խորենացի 85
էլ. հասցե՝ edo444@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էլայզեռ» ՍՊԸ միջև 11.04.2016թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/35-1 գնման պայմանագրին կից 30.01.2017թ. կնքված թիվ 2 համաձայնագրի շրջանակներում Ձեր ընկերությունը 2017թ. ընթացքում էականորեն խախտել է անհատական փաթեթավորմամբ կարագի մատակարարման ժամկետները:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 11-ին միակողմանի մասնակի լուծել է ՇՀԱՊՁԲ-7/35-1 պայմանագրին կից 30.01.2017թ. կնքված թիվ 2 համաձայնագիրը՝ հունիս ամսվա խմբաքանակից 2 810 կգ, հուլիսից նոյեմբեր ամիսների ամբողջ խմբաքանակը՝ 32 976 կգ, ինչպես նաև 11.04.2016թ. կնքված ՇՀԱՊՁԲ-7/35-1 առանց ֆինանսական միջոցներով /պայմանով/ պայմանագիրը 46 624 կգ խմբաքանակի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Էլայզեռ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 41 942 120 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասուներկու հազար մեկ հարյուր քսան) ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10 %-ը), ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1 532 377 (մեկ միլիոն հինգ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամը որպես տույժ (պայմանագրի 7.2 կետի համաձայն):

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ